ԴԱՏԱԿԱՆ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ

0009, ՀՀ, ք. Երևան, Կորյունի 15/1, 010 511 820, www.court.am

N ԴԴ-3-Ե- 6478

«26» օգոստոսի 2024թ.

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Գ. ԱՌՈՒՍՏԱՄՅԱՆԻՆ
(հասցե՝ ք. Վաղարշապատ 1101, Մռավյան փ. 40Ա)

«ՎԱՐՄԷՔՍ» ՍՊԸ-Ի ՏՆՕՐԵՆ Մ. ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ
(հասցե՝ Տիգրան Մեծի 46/4)

Հարգելի՛ մասնակիցներ,

Սույնով ծանուցում եմ, որ Դատական դեպարտամենտի կարիքների համար համակարգչային սարքավորումների և օժանդակ նյութերի ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում գնահատող հանձնաժողովի կողմից առաջին տեղը զբաղեցրած մասնակիցների հայտերի գնահատման արդյունքում Ձեր կողմից ներկայացված հայտերում արձանագրվել են հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ, մասնավորապես՝

«ԻՄՓՐՈՒՎ» ՍՊԸ

1. Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունը՝ Հավելված N 1, հաստատված չէ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:
2. Ընկերության կողմից ներկայացված հայտում բացակայում է իրական շահառուների վերաբերյալ հայտարարագրի ձև՝ Հավելված N 1.3-ը,
3. 1-ին, 2-րդ, 6-րդ և 11-րդ չափաբաժինների մասով eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) չեն առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը:

«ՎԱՐՄԷՔՍ» ՍՊԸ

Ընկերության կողմից ներկայացված հայտում առկա էլեկտրոնային աճուրդին մասնակցելու դիմում-հայտարարությունում՝ Հավելված N 1, թերի է նշված գործունեության հասցեն:

Վերոգրյալով պայմանավորված և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը, ինչպես նաև «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի ՄԱՍ I-ի 8.11 կետը՝ առաջարկում եմ մինչև սույն թվականի օգոստոսի 27-ը ներառյալ eauction.armeps.am համակարգի միջոցով շտկել վերոնշյալ անհամապատասխանությունները:

Միաժամանակ հայտնում եմ, որ սահմանված ժամկետում արձանագրված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում հայտերը կգնահատվեն անբավարար և կմերժվեն:

ՂԵԿԱՎԱՐԻ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ՀԱՐՑԵՐՈՎ ՏԵՂԱԿԱԼ

ԱՐՇԱԿ ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ

Կատ՝. «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-24/25» ծածկագրով
գնման ընթացակարգի համակարգող՝ Մ.Հայրապետյան
Հեռ.՝ /+37410/ 511-783, 511-788